

# Տեղեկատվական ամփոփագիր

## Անգրավ սպառողական վարկ

|                                                           |                                                                                                                                                                                                                                                |                                                                                                                                                                                                     |
|-----------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Վարկի նպատակը                                             | Սպառողական                                                                                                                                                                                                                                     | Վերաֆինանսավորում <sup>4</sup>                                                                                                                                                                      |
| Հաճախորդի տեսակ                                           | 18-63* ՀՀ-ում հաշվառված ֆիզիկական անձինք                                                                                                                                                                                                       |                                                                                                                                                                                                     |
| Եկամուտների վերլուծության պահանջ                          | Փաստաթղթավորված եկամուտ                                                                                                                                                                                                                        | Եկամուտների ուսումնասիրություն չի պահանջվում <sup>2</sup> , եթե վերաֆինանսավորվող վարկը սպասարկվել է առնվազն 12 ամիս և այդ ընթացքում ժամկետանց օրերի հանրագումարը 1 վարկի գծով չի գերազանցում 5 օրը |
| Վարկի արժույթ                                             | ՀՀ դրամ                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                                                                                                     |
| Վարկի գումար                                              | 100,000-20,000,000 ՀՀ դրամ                                                                                                                                                                                                                     |                                                                                                                                                                                                     |
| Վարկի ժամկետ                                              | 1-60 ամիս                                                                                                                                                                                                                                      |                                                                                                                                                                                                     |
| Տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/                | 13% - 21,0%                                                                                                                                                                                                                                    |                                                                                                                                                                                                     |
| Տարեկան փաստացի տոկոսադրույք                              | 13,81% - 23,1%                                                                                                                                                                                                                                 |                                                                                                                                                                                                     |
| Եկամուտների առավելագույն հարաբերակցությունը (ԸՊԵ կամ OTI) | ≤ 60%                                                                                                                                                                                                                                          | OTI գործակից չի հաշվարկվում <sup>3</sup>                                                                                                                                                            |
| Մարման եղանակ                                             | Անուիտետային<br>(մայր գումարի և տոկոսագումարի ամենամյա հավասարաչափ վճարում)                                                                                                                                                                    |                                                                                                                                                                                                     |
| Վարկի տրամադրման եղանակ                                   | Անկանխիկ                                                                                                                                                                                                                                       |                                                                                                                                                                                                     |
| Վարկի վաղաժամկետ մարման տույժ                             | Առկա չէ                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                                                                                                     |
| Վարկի տրամադրման միջնորդավճար                             | Առկա չէ                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                                                                                                     |
| Վարկի սպասարկման ամսական վճար                             | Առկա չէ                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                                                                                                     |
| Ժամկետանց մայր գումարի տույժ                              | 0,1% օրական                                                                                                                                                                                                                                    |                                                                                                                                                                                                     |
| Ժամկետանց տոկոսի տույժ                                    | 0,13 % օրական                                                                                                                                                                                                                                  |                                                                                                                                                                                                     |
| Երաշխավոր                                                 | Ֆիզիկական անձինք, ովքեր անշարժ գույքի սեփականատեր կամ համասեփականատեր են կամ գրանցված աշխատող են                                                                                                                                               |                                                                                                                                                                                                     |
| Հաճախորդի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ      | Վարկի տրամադրման պահին գործող վարկերը և այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես հսկվող կամ ավելի խիստ դասերով, Վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր /մարված և գործող/ |                                                                                                                                                                                                     |

|                                                              |                                                                                                                                                                                                                                                                                                          |
|--------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|                                                              | վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը<br>չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը , իսկ<br>վերաֆինանսավորման դեպքում 15 օրացուցային օրը                                                                                                                                                             |
| <b>Երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ</b> | Վարկի տրամադրման պահին գործող վարկերը և այլ<br>անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված<br>երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ<br>դասակարգված որպես հսկվող կամ ավելի խիստ դասերով                                                                                                        |
| <b>Աշխատանքային փորձ /անընդմեջ վերջին ամիսներ/</b>           | 3-6 ամիս                                                                                                                                                                                                                                                                                                 |
| <b>Եկամուտները հավաստող փաստաթուղթ</b>                       | Հիմք է հանդիսանում Նորք <sup>5</sup> տեղեկատվավերլուծական<br>կողմից տրամադրված զուտ աշխատավարձի չափը, այն<br>դեպքերում երբ աշխատավարձը Նորք<br>տեղեկատվավերլուծական կենտրոնում գրանցված չլինելու<br>դեպքում հիմք է հանդիսանում 6 ամսվա բանկային<br>քաղվածք /պայմանագիրկամ՝ հարկային<br>հաշվետվություններ |

1. վարկի ավարտին, եթե վարկառուի տարիքը գերազանցում է 63 տարին, ապա վարկային հայտը կարող է դիտարկվել համապարտ երաշխավորի ներկայացման դեպքում
2. վարկերի վերաֆինանսավորման դեպքում եկամուտների ուսումնասիրություն տեղի չի ունենում , եթե հաճախորդը հանդիսանում է Ա, Բ և Գ սեգմենտների պահանջներին բավարարող գործատուի աշխատակից:
3. վարկերի վերաֆինանսավորում հնարավոր է իրականացնել, եթե հաճախորդի նախորդ մեկ տարվա ընթացքում վարկերի գծով վճարումների չափը ավելացել է առավելագույնը 10%-ի չափով: Սույն դրույթը վերաբերվում է նաև լրացուցիչ գումար տրամադրելու համար:
4. վարկերի վերաֆինանսավորմանը չեն մասնակցում , ոսկու գրավով ապահովված վարկերը
5. Նորք տեղեկատվավերլուծական կենտրոնի տրամադրված տեղեկատվությունը հիմք է հանդիսանում , եթե տվյալները թարմացվել են վարկի դիտարկման նախորդ օրացուցային ամսվա ընթացքում

! Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ և Երաշխավորին կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի էական պայմանները:

## Ծանոթություն

1. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
2. Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով:
3. Վարկը տրամադրվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Զվարթնոց» և «Տիգրան Մեծ» մասնաճյուղերի:
4. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են՝  
Վարկառուի և Երաշխավորի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,
5. Վարկի մերժման գործոններն են՝ Վարկառուի անբավարար եկամուտները:
6. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում և տրամադրում՝ մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկը Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:
8. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ, ԵԹԵ ՎԵՐՋԻՆՍ ՀԱՇՎԵԳՐՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ ԻՍԿ 3-ՐԴ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ:
9. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ [www.fastbank.am](http://www.fastbank.am), ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:
10. Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս զրկվի իր սեփական գույքից:
11. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴԻՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
12. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ [www.fastbank.am](http://www.fastbank.am):
13. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: 14. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՂ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:
14. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:**